

Համայնքի ղեկավարի 2018 թվականի տարեկան հաշվետվություն

30.01.2019թ.

2019 թվականի հունվարի 30-ին ժամը 12:00 ին տեղի ունեցավ Արմավիրի մարզի Կողբավան համայնքի ղեկավարի տարեկան հաշվետու ժողովը:

Ժողովին մասնակցում էին Կողբավան համայնքի ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:

Հաշվետու զեկույցով հանդես եկավ Կողբավան համայնքի ղեկավարը՝ Սերոբ Սերոբյանը:

Հարգելի ընկերներ, ավագանու անդամներ, հրավիրվածներ՝ ես՝ Կողբավան համայնքի ղեկավարս, ներկայացնում եմ հաշվետվություն Կողբավան համայնքի 2018 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ինչպես գիտեք՝ Կողբավան համայնքն ունի բազում հիմնախնդիրներ, որոնցից հատկապես կառանձնացնեի խմելու ջրի բացակայության հարցը:

Գյուղը խմելու ջրով ապահովելու հարցը կլուծվի մոտ ապագայում՝ 2019 թվականի ընթացքում՝ համայնքի 03.10. և 05.10. 2018 թվականին կայացած աճուրդի՝ հողերի օտարումից համայնքի ֆոնդային բյուջե մուտքագրված միջոցներով:

Համայնքն անելիքներ ունի նաև կրթության բնագավառում, քանի որ Կողբավանի դպրոցահասակ երեխաները սեփական համայնքում դպրոց հաճախելու հնարավորությունից զրկված են: Դպրոցահասակ երեխաներին հարևան Վանանդ համայնք, որտեղ կազմակերպվում է նրանց ուսուցումը, հասցնելու հոգսերը հոգում է համայնքապետարանը:

Այդ նպատակով օրերս կազմակերպվեց գնման ընթացակարգ ավտոմեքենա ձեռք բերելու համար, որը երեխաներին կհասցնի դպրոց:

Կանանց միամսյակի կապակցությամբ տրվել է դրամական խրախուսում:

2018 թվականի ընթացքում գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետ կատարումն ապահովելու նպատակով հարևան համայնքներից հրավիրել ենք կոմբայներ, խոտհնձիչ տրակտորներ հաապատասխան մասնագետներով:

Իսկ այժմ ֆինանսական ցուցանիշների մասով

Եկամուտների մասով կիսամյակային պլանային առաջադրանքը կատարվել է 89.9 տոկոսով՝ պլանային 8998,0 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 80858.3 հազար դրամ, որն էլ ձևավորվել է հետևյալ ուղղություններից.

ՀՈՂԻ ՀԱՐԿ պլանային առաջադրանքը կատարվել է 91,4 տոկոսով, տարեկան 3229,0 հազար դրամի դիմաց մուտքագրել է 2950,5 հազար դրամ:

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ մասով պլանային առաջադրանքը կատարվել է 55,4 տոկոսով. Պլանային 217,0 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 120,2 հազար դրամ:

Համայնքի սեփականություն համարվող ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ մասով պլանային առաջադրանքը կատարվել է 66,4 տոկոսով:

ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ մուտքեր – պլանային առաջադրանքը կատարվել է 100 տոկոսով:

Համայնքին ֆինանսական համահարթեցման նպատակով տրվել է դոտացիա 3500,0 հազար դրամ:

2018 թվականի հոկտեմբերի 3-ին և նույն ամսի 5-ին կայացած աճուրդի ընթացքում օտարվել է 1000,0 հա հողակտոր և համայնքի բյուջե է մուտքագրվել 120 687,7 հազար դրամ գումար, որի միջոցով 2019 թվականի ընթացքում կլուծվի համայնքի խմելու ջրի հարցը, ինչպես նաև արդեն ձեռք է բերվել ավտոմեքենա դպրոցական երեխաներին դպրոց տանելու և ետ բերելու համար:

Կողբավան համայն քը 2018 թվականի ընթացքում համայնքապետարանի աշխատանքների անխափան կազմակերպելու համար ձեռք է բերել համակարգիչ 260,0 հազար դրամ և տպիչ 123,0 հազար դրամ արժողությամբ:

Ձեռք է բերվել նաև 6 հատ աթոռ , 2 գրասեղան, 2 գրապահարան ընդհանուր արժեքը 334,0 հազար դրամով:

#### ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՈՎ

2018 թվականի ընթացքում կատարվել են ծախսեր հետևյալ կտրվածքով ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ մասով 7464.3 հազար դրամ:

Կատարվել է էլէներգիայի վարձավճար 43.9 հազար դրամ :

Համակարգչային ծառայություններից օգտվելու համար ծախսվել է 20.5 հազար դրամ:

Գրենական պիտույքների ձեռք բերման համար կատարվել է ն ծախսեր 60.0 հազար դրամի չափով:

Կանաց միամայակի կապակցությամբ դրամական խրախուսում 100,0 հազար դրամի չափով:

Համայնքի հիմնախնդիրներն են ինչպես արդեն նշվեց.

1. Խմելու ջրի բացակայությունը, կ որի իրագործումը ներառվել է 2019 թվականի բյուջեում և կյանքի կկոչվի ընթացիկ տարում
2. Կրթության բնագավառում ` դպրոցաշինություն
3. Գազաֆիկացում

Կողբական համայնքի ղեկավար

Ս. Սերոբյան